

Կրթություն

Շաբաթերթ «Krtutian» (education) weekly «Кртытион» (образование) еженедельник 22.02.2017թ. չորեքշաբթի թիվ 7-8 (772-773)

Մայրենի



Առաջին բառը, որ արտաբերում ես քո թոթով լեզվով,
Առաջին միտքը, որ հղանում ես աշխարհաճանաչման քո արշալույսին,
Առաջին դրվագը, որ ագուցում ես հուշերիդ շղթային,
Առաջին տողը, որ գրում ես,
Առաջին գիրքը, որ կարդում ես,
Առաջին սերը, որ զգում ես,
Առաջին օրը, որ ապրում ես,
Աղոթքդ առաջին,
Ջարմանքդ առաջին,
Կասկածդ առաջին,
Առաջին նկատումդ,
Առաջին ընկալումդ,
Հայտնագործումդ ու բացահայտումդ առաջին...

Ու այս ամենը՝ անվերջ, անընդհատ, նորից ու դարձյալ՝ մի ամբողջ կյանք՝ մինչև շունչդ վերջին...

Քո սկիզբը,
Քո ընթացքը,
Քո էությունը՝
Քո մայրենի լեզուն:

Գ.Մ.

տե՛ս՝ նաեւ էջ 12-13



Փետրվարի 21-ին Երկիրը նշեց Մայրենի լեզվի օրը

Սրբոց Վարդանանց



Եթե հայ ես, ուրեմն՝ զինվոր ես, անկախ նրանից՝ սուր է ձեռքինդ, խաչ, բահ, թե գրիչ: Ու հայոց պատմությունն էլ եղել է ընդհանրական Ավարայր. գոյապայքար թե՛ իրական, թե՛ հոգեւոր պատերազմների մեջ՝ համուն ինքնության, տեսակի պահպանման, համուն համընդհանուր քաղաքակրթական զարգացման:

Ավարայրը մեր հիշողության մեջ մնացած առաջին հայրենական պատերազմն է, նաեւ՝ աշխարհում համուն հավատի մղված առաջին խոշոր մարտն ընդհանրապես, որ մեզանում մնաց՝ որպես համուն հայրենիքի անձնագրողության եւ զիտակցված մահի գաղափարական խորհրդանիշ. «**Չզիտակցված մահը մահ է, զիտակցված մահը՝ անմահություն**»,- Վարդանանց պատմիչ Եղիշեի բանաձեւ-ձեւակերպումը եղավ մեր ամենից նվիրական ասույթ-կարգախոսը:

Սուրբ Վարդանանք. այս անունով են ճանաչվում այն բոլոր նահատակները, ովքեր մարտիրոսվեցին Ավարայրի ճակատամարտում՝ 451թ., վասն Հիսուսի, վասն Հայրենյաց:

Հաճախ ենթադրվում է, թե քրիստոնեությունը ստրկության ու լոկ հնազանդության ուսմունք է: Մինչդեռ տասնյակ դարեր առաջ Վարդանանք ապացուցեցին, որ քրիստոնեությունը կոչում է սխրանքի եւ հավերժության:

Ավարայրը քրիստոնյա աշխարհի թերեւս առաջին ու միակ ռազմական բախումն էր, ուր լույսի եւ խավարի, կյանքի եւ մահվան, հավատի եւ հավատալիության, հայրենիքի ու ստրկացման իրարամերձ գաղափարներն էին բախվում, ուր ճշտվում էր մեկ անգամ եւս Հիսուսի՝ մեռնելով ապրելու պատգամը:

Վարդանանց սուրբ նահատակների տոնն ամեն տարի նշվում է Մեծ Պահքին նախորդող հինգշաբթի օրը: Այս տարի տոնը ոգեկոչվելու է վաղը՝ փետրվարի 23-ին:


Նախորդող երեքշաբթի օրը Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին նշեց Ղեւոնդյանց ոգեկոչման օրը: Այս անվան տակ ճանաչվում են այն հոգեւորականները, ովքեր Վարդանանց պատերազմից հետո, Ատրորմիզդ մարզպանի դրդումով, պարսից Հարզկերտ Բ-ի հրամանով ձերբակալվում են՝ Հայոց երկիրն ապստամբական մոր խլրտուններից զերծ պահելու համար, եւ տարվում Ապար աշխարհի Նյուշապուհ բերդը: Այնտեղ նրանց առաջարկվում է ընդունել մագդեզական կրոնը՝ իրենց կյանքը փրկելու համար: Ղեւոնդյանք մերժում են այդ առաջարկը եւ նահատակվում: Պատմությունը հիշում է նրանց անունները. **Հովսեփ կաթողիկոս, Սահակ եպիսկոպոս, Ղեւոնդ երեց, Մուշե քահանա, Արշեն երեց, Քաջաջ սարկավազ:** Սրանց հետ էին նաեւ Աբրահամ եւ Խորեն երեցները, որոնց ականջները միայն կտրելով ազատ են արձակում՝ տարագրության մեջ ապրելու պայմանով: Որոշ ժամանակ անց, չղիմանալով Ատրեստանի տոթակեզ եղանակներին, Խորենը մահանում է: Աբրահամը հետագայում թույլտվություն է ստանում հայրենիք վերադառնալու եւ ձեռնադրվում է Բզնունիքի եպիսկոպոս: Նրան է վերագրվում ասորական հայտնի «Վկայք Արեւելից» երկի հայերեն թարգմանությունը:

շարունակությունը՝ էջ 5

Գիրք նվիրի

Կարելորդ ավանդույթի արմատավորումն է

Փետրվարի 19-ին՝ աշխատանքային օրվա ավարտին, ՀՀ ԿԳ նախարար **Լեւոն Սկրտչյանին** եւ փոխնախարար **Մանուկ Սկրտչյանին** հաճելի անակնկալ են մատուցել Ավետիսյան դպրոցի աշակերտները:



Հովհաննես Թումանյանի ծննդյան օրը, Գիրք նվիրելու օրվա առիթով, դպրոցի 12-րդ դասարանի աշակերտուհի **Միլենա Գալստյանը** եւ 10-րդ դասարանի աշակերտ **Ջավեն Անտոնյանը**, դպրոցի տնօրեն **Մելանյա Գեղամյանի** գլխավորությամբ, ՀՀ կրթության եւ գիտության նախարար **Լեւոն Սկրտչյանին** նվիրել են Ղեւոնդ Ալիշանի «Այրառատ», իսկ փոխնախարար **Մանուկ Սկրտչյանին**՝ «Կոմիտաս» գրքերը՝ փոխադարձաբար կրթության ոլորտի պատասխանատուներից նվեր ստանալով Գրիգոր Նարեկացու եւ Ներսես Շնորհալու հատորյակները:

Աշակերտների հետ ունեցած կարճ գրույցի ընթացքում նախարար **Լեւոն Սկրտչյանը**, շնորհակալություն հայտնելով գեղեցիկ անակնկալի համար, կարելորդ է հասարակության մեջ, հատկապես՝ երեխաների ու երիտասարդների շրջանում գիրք նվիրելու ավանդույթի արմատավորվումը:

շարունակությունը՝ էջ 9

Այս համարում

- ՀՀ Շիրակի մարզի թվով 47 հանրակրթական ուսումնական հաստատություններում իրականացված ուսումնասիրությունների արդյունքների վերլուծությունը (1-ին մասը)

տե՛ս՝ էջ 20-21

Հաջորդ համարում

- 4-րդ դասարանում գիտելիքների ստուգման ուղեցույցները եւ թեստերի նմուշները
- 9-րդ դասարանի ավարտական քննությունների ուղեցույցները՝ ըստ առարկաների
- «Հայոց լեզու եւ գրականություն», «Մաթեմատիկա», «Օտար լեզու», «Բնագիտություն» եւ «Հայոց պատմություն» առարկաներից պետական ավարտական քննությունների եւ միասնական քննությունների ավարտական մասի արդյունքների գնահատման սանդղակը

ՀՀ ԳԱԱ Հրաչյա Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ

Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի Հրաչյա Աճառյանի անվան լեզվի ինստիտուտը ակադեմիայի առաջնեկներից է: Հիմնադրվելով 1943 թ.՝ այն շարունակում է հայ լեզվաբանական մտքի զարգացման նախորդ փուլի ավանդները եւ առաջ մղելով գիտական միտքը՝ դառնում նոր շրջանի հայերենագիտության կարեւորագույն կենտրոնը, որտեղ համակարգված աշխատանքներ են ծավալվում լեզվի հետազոտության հիմնարար ուղղություններով, տասնամյակների ընթացքում ստեղծվում բազմաթիվ մեծարժեք գիտական աշխատություններ, պատրաստվում գիտական հետաքրքրությունների լայն շրջանակ ունեցող հմուտ լեզվաբաններ:

Գիտական օջախի տնօրեն, բանասիրական գիտությունների թեկնածու **Վիկտոր Կատվայանը** նշում է, որ ինստիտուտի կազմում գործում մեծ ավանդ ունեն հայ լեզվաբանության կարկառուն դեմքեր, ակադեմիկոսներ Արարատ Ղարիբյանը (ինստիտուտի տնօրեն՝ 1943-1950 թթ., 1956-1962 թթ.), Գրիգոր Ղափանցյանը (ինստիտուտի տնօրեն՝ 1950-1956 թթ.), Գեորգ Ջահուկյանը (ինստիտուտի տնօրեն՝ 1962-2005 թթ.): Այսօր ինստիտուտում իրենց գիտական բեղուն գործունեությունն են շարունակում ակադեմիայի թղթակից անդամ Լավրենտի Հովհաննիսյանը (ինստիտուտի տնօրեն՝ 2006-2011 թթ.) եւ բանասիրական գիտությունների ղեկավար, պրոֆեսոր Վազգեն Համբարձումյանը (ինստիտուտի տնօրեն՝ 2011-2012 թթ.): Կառույցի փոխտնօրենն է բանասիրական գիտությունների թեկնածու Նազիկ Հովհաննիսյանը:

Ինստիտուտի գիտահետազոտական գործունեության կիզակետում առաջին հերթին հայերենագիտության հիմնարար հարցերն են՝ հատկապես հայոց լեզվի կառուցվածքին, գործառնությանը, հայերենի բարբառներին, հայոց լեզվի պատմությանն ու համեմատական քերականությանը առնչվող:

Տասնամյակների ընթացքում զգալի աշխատանքներ են կատարվել ժամանակակից հայերենի քերականական կառուցվածքի եւ գործառնության հետազոտության ուղղությամբ: Այս ոլորտում լայն կիրառություն են ստացել ուսումնասիրության նոր՝ հատկապես կառուցվածքային, վիճակագրական, փորձառական մեթոդներ, լեզվի հետազոտության համակարգչային ծրագրեր, նոր եւ նորագույն տեխնոլոգիաներ: Բազմաթիվ մեծագործություններում ու ժողովածուներում լուսաբանվել են լեզվական կառուցվածքի տարբեր հարցեր, կատարվել է բառապաշարի, հնչյունական, հոլովման եւ խոնարհման ենթահամակարգերի, քերականական առանձին կարգերի եւ առանձին խոսքի մասերի ուսումնասիրություն: Այդ ամենի արդյունքներն ամփոփված են «*Ժամանակակից հայոց լեզու*» եռահատոր ակադեմիական քերականության մեջ, որը պարունակում է լեզվական բոլոր մակարդակների մանրա-

մասն նկարագրությունը: Նշանակալի են հայոց լեզվի զարգացման եւ կառուցվածքին, ժամանակակից հայերենի տեսության հիմունքներին, իմաստաբանությանը եւ բառակազմությանը (Գեորգ Ջահուկյան, Էդուարդ Աղայան), ժամանակակից գրական հայերենի քերականությանը, բային ու անվանական խոսքի մասերին, չթեքվող խոսքի մասերին, դրանց բառական ու քերականական հատկանիշների փոխհարաբերությանը (Սերգեյ Աբրահամյան, Գրիգոր Գարեգինյան), ժամանակակից հայերենի շարահյուսությանը, շարահյուսական կառուցվածքի առանձին միավորների, հարաբերությունների ու հասկացությունների (Վարազ Առաքելյան, Նվարդ Պառնասյան), հնչյունաբանությանը, հնչյունային ու հնչույթային համակարգերին, շեշտի եւ հնչերանգի առանձնահատկություններին (Ամալյա Խաչատրյան, Ռոբերտ Թոխմախյան, Աիդա Արամյան) նվիրված հիմնարար աշխատությունները: Մշակել կամ առաջադրել են հայ քերականագիտության զարգացման համար կարելի որ սկզբունքներ: Ժամանակին ինստիտուտում ընթացող՝ քերականության հարցերին նվիրված գիտական բանավեճերը բուռն հետաքրքրություն էին առաջ բերում մարաբաղաքի մտավորականության շրջանում. ազգած լեզվաբանությանն անմիջաբար չառնչվող մարդիկ անտարբեր չէին մնում:

Քննվել են նաեւ ժամանակակից հայերենի բառապաշարին, դրա զարգացման ու հարստացման միտումներին եւ հնարավորություններին, նորաբանություններին, փոխառություններին ու պատճենումներին առնչվող հարցեր, հետազոտվել են բառակազմական ու իմաստաբանական իրողություններ (Հմայակ Օհանյան, Սեդա Էլոյան):

Ոճագիտության ասպարեզում կատարվել է գործառնական ոճերի եւ քերականական ու ձեւաբանական ոճաբանության հարցերի քննություն (Ռոզա Մկրտչյան): Ստեղծվել են գեղարվեստական գրականության լեզվին վերաբերող աշխատություններ, քննվել են շարահյուսությանն առնչվող ոճաբանական հարցեր՝ դարձվածքների, արտահայտչական միջոցների, բառակազմության ոճական հնարավորությունները, հայերենի ժողովրդախոսակցական տարբերակային առանձնահատկությունները:

Մի շարք աշխատություններ են նվիրվել տեխնիկական, բժշկագիտական, հասարակական-քաղաքական, գրականագիտական, թատերագիտական, լեզվաբանական, գյուղատնտեսական, ռազմական, կրոնականեղեցական տերմինաբանության ծագման եւ զարգացման պատմությանը: Գիտատեսական խնդիրների քննությանը զուգընթաց՝ առաջին անգամ տերմիններ, տերմինաբանական բառարաններ են կազմվել գիտության նորագույն ճյուղերի գծով (Ֆիտոցենոլոգիա, մոլեկուլային ֆիզիկա, շրջակա միջավայրի պահպանություն, դիվանագիտություն, տարագրություններ), հրատարակվել են ֆենոլոգիայի եւ գոյապահպանության հայերեն-ռուսերեն-անգլերեն բացատրա-



կան բառարանները: Կազմվել է «*Հայոց լեզվի գիտատեխնիկական տերմինաբանության բառարան-տեղեկատու*»:

Հայագիտության ավանդական ուղղությունների ընդլայնմանն ու զարգացմանը զուգահեռ՝ հետազոտություններ են ծավալվել հանրալեզվաբանության, հոգելեզվաբանության (հրատարակվել է փոխաբերացման հոգելեզվաբանական վերլուծությանը վերաբերող աշխատություն), տեքստերի լեզվաբանության, մաթեմատիկական լեզվաբանության ուղղություններով, զարգացման նոր մակարդակի է բարձրացել փորձառական հնչյունաբանությունը եւ այլն:

Ըստ տնօրենի՝ զգալի աշխատանքներ են կատարվել ընդհանուր եւ համեմատական լեզվաբանության բնագավառում: Ստեղծվել են ընդհանուր եւ համեմատական լեզվաբանության հարցերին եւ պատմությանը նվիրված հիմնարար աշխատություններ (Հրաչյա Աճառյան, Գրիգոր Ղափանցյան, Էդուարդ Աղայան, Գեորգ Ջահուկյան): Կարեւոր արդյունքներ են ձեռք բերվել ընդհանուր լեզվաբանական կաղապարների մշակման, լեզվական միավորների ու մակարդակների փոխհարաբերության, լեզվաբանական կարգերի սահմանման ու դասակարգման, լեզուների հեռավոր ցեղակցության ուսումնասիրության եւ նոստրատիկ լեզվաբանության ուղղությամբ: Քննության են առնվել հայերենի եւ առաջավոր Ասիայի հին լեզուների առնչությունները, հարեւան հնդեվրոպական եւ ոչ հնդեվրոպական լեզուների հետ հայերենի բազմապիսի շփումները (Գեորգ Ջահուկյան, Գրիգոր Ղափանցյան, Լավրենտի Հովհաննիսյան, Վազգեն Համբարձումյան, Մելադա Աղաբեկյան): Կարեւոր է նաեւ լեզվի ձեւայնացված քննության սկզբունքների ու մեթոդների մշակումը եւ դրանց կիրառումը հայոց լեզվի կառուցվածքի ուսումնասիրության մեջ (Ռոբերտ Ուռուտյան, Լիանա Հովսեփյան, Վառնապուհ Ջիհանյան): Կատարվել են ուսումնասիրություններ՝ նվիրված լեզուների տիպաբանությանը եւ պրագմալեզվաբանությունը (Էրիկ Աթայան):

Լայն ուշադրության են արժանացել հայ լեզվաբանության

պատմության հարցերը: Հրատարակվել են հայ լեզվաբանության եւ հայ քերականության պատմությունը (Գեորգ Ջահուկյան, Էդուարդ Աղայան, Գուրգեն Սեւակ): Մենագրություններ են նվիրվել լեզվաբանության զարգացման առանձին բնագավառների:

Նշանակալից են ձեռքբերումները հայոց լեզվի պատմության ուսումնասիրության բնագավառում: Հավաքվել է փաստառատ նյութ, ստեղծվել են ինչպես հայոց լեզվի ամբողջական պատմությանը (Հրաչյա Աճառյան, Սերոբ Ղազարյան), այնպես էլ նրա զարգացման առանձին շրջանների ու բնագավառների վերաբերյալ աշխատություններ (Գեորգ Ջահուկյան, Վարազ Առաքելյան, Աշոտ Աբրահամյան, Սերոբ Ղազարյան, Էդուարդ Աղայան, Լիանա Հովսեփյան, Արտեմ Սարգսյան): Ուշադրության կենտրոնում են եղել այնպիսի հիմնարար հարցեր, ինչպիսիք են հայերենի զարգացման փուլերի ժամանակագրական սահմանների եւ առանձնահատկությունների որոշումը, գրական լեզուների ձեւավորման եւ գործառնության, դրանց բարբառային հիմքերի զարգացման ու մշակման հիմնական միտումների բացահայտումը (Գեորգ Ջահուկյան, Լիանա Հովսեփյան, Վազգեն Համբարձումյան): Լեզվի պատմությանը ավելի ու ավելի հաճախ են անդրադառնում գրաբարի, միջին հայերենի, վաղ աշխարհաբարի բառապաշարային շերտերին, դրանց գործառնական առանձնահատկություններին, իմաստային խմբերին: Բազմակողմանիորեն քննվել է 5-րդ դարի հայ մատենագիտության բառապաշարը, դիտարկվել են նաեւ թարգմանական գրականության բառապաշարի ոճական, ժանրային յուրահատկությունները՝ թեմատիկ բազմագնություններ հանդերձ: Ի հայտ են բերվել հարյուրավոր նոր բառեր, որոնց ստուգաբանությունը, իմաստների ճշգրտումը, գործառնական նրբերանգների պարզաբանումը մեծ կարեւորություն ունեն լեզվի պատմության համար: Արժեքավոր են 5-րդ դարի գրաբարի եւ հայ թարգմանական գրականության բառապաշարին, գրաբարի բառապաշարի իմաստային խմբե-

րի քննությանը, «*Նոր հայկազյան բառարանում*» չվկայված բառերին (Լավրենտի Հովհաննիսյան), հայոց լեզվի համեմատական բառագիտությանը եւ լատինաբան հայերենին (Վազգեն Համբարձումյան) նվիրված մեծագրությունները: Ավարտվել է 6-8-րդ դդ. հին հայերենի լիակատար էլեկտրոնային բառարանի կազմումը (Արտեմ Սարգսյան): Հայոց լեզվի պատմության ուսումնասիրության ոլորտում հատկապես արժեքավոր է միջին հայերենի պատմությանը նվիրված «*Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության*» երկհատոր աշխատությունը (Հովհաննես Մուրադյան, Լիանա Հովսեփյան, Մարտ Մուրադյան, Սամվել Անթոնյան, Պերճուհի Վարդապետյան, Լենա Կարապետյան): Ընդհանուր առմամբ՝ տարածամանկյա հայեցակետով լուսաբանվել են լեզվական կառուցվածքի առանձին մակարդակների, ինչպես նաեւ քերականական առանձին կարգերի եւ առանձին խոսքի մասերի զարգացման հարցերը: Հնչյունական, հոլովման, խոնարհման համակարգերի, բառակազմության պատմական հետազոտությունների արդյունքները ամփոփվել են «*Հայերենի պատմական քերականություն*» երկհատորյակում:

Մեծ ծավալի աշխատանք է կատարվել հայ բարբառների ուսումնասիրության ուղղությամբ (Հրաչյա Աճառյան, Արարատ Ղարիբյան, Հովհաննես Մուրադյան, Էդուարդ Աղայան, Վարդան Պետոյան, Սիրուշ Բաղդասարյան, Ռուբեն Բաղրամյան, Կարո Դավթյան եւ ուրիշներ): Հարստարկվել են բազմաթիվ բարբառների վերաբերող մեծագրություններ, մշակվել են հայ բարբառների հնչյունական, տիպաբանական եւ բազմահատկանիշ դասակարգման սկզբունքները (Արարատ Ղարիբյան, Գեորգ Ջահուկյան): Վիկտոր Կատվայանի խոսքով՝ բարբառագիտական ուսումնասիրությունների բնագավառում նշանակալից է հայերենի բարբառագիտական ատլասի ստեղծման ձեռնարկումը: Կատարվել է ատլասի վերաբերյալ նյութերի հավաքում թե՛ Հայաստանում եւ թե՛ նրա սահմաններից դուրս գտնվող հայրուրավոր վայրերից. ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր աղբյուրների հիման վրա ընթանում են այդ նյութերի դասդասման, ուսումնասիրման եւ նկարագրման աշխատանքները: Միաժամանակ նպատակ է դրված վերականգնելու բարբառների աշխարհագրական տեղաբաշխման պատմական պատկերը եւ, մասնավորապես, ցույց տալու հայ բարբառների՝ մինչեւ 1915 թ. եղած վիճակը: Ստեղծվել է «*Հայերենի տարածքային տարբերակների շտեմարան*», որը քարտեզագիր համակարգերի համակցությամբ հնարավորություն կտա կազմելու բարբառագիտական քարտեզներ: Մշակվել է նաեւ հայերենի բարբառների հնչադրերի հիմնորինակը: 2001 թ. «*Երկիր եւ մշակույթ*» հասարակական կազմակերպության աջակցությամբ երկու գիտաշխատակից գործուղվել է Սիրիա՝ բարբառագիտական նյութ հավաքելու:

Հարունակությունը՝ էջ 16

ՀՀ ԳԱԱ Հրաչյա Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ

սկիզբը՝ էջ 14

Հարուստ ավանդույթներ ունի հայ բառարանագրությունը: Հայերենագիտության այս բնագավառը լեզվի ինստիտուտը համարել է բացատրական, երկլեզվյան-թարգմանական բառարաններով, ստեղծել հոմանիշների, հականիշների, լեզվաբանական, շրջուն (հանգաբառարան), հաճախականության, տարբեր հեղինակների լեզվի, բարբառային, տերմինաբանական, հայոց լեզվի նորաբանությունների, ուղղագրական բառարաններ: Հրատարակվել են Ստեփան Մալխասյանցի «Հայերեն բացատրական բառարանը» (քառահատոր, ԽՍՀՄ պետ. մրցանակ՝ 1946 թ.), «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանը» (քառահատոր) եւ «Ռուս-հայերեն» (քառահատոր) եւ «Հայ-ռուսերեն» թարգմանական բառարանները, բարբառային բառերի (7 հատոր), լեզվաբանական, հայոց լեզվի հաճախականության եւ այլ բառարաններ: Հրատարակվել են հայ բառարանագրության պատմությանը (XVII դ. վերջ – XIX դ.) եւ գրաբարի բառարանագրությանը նվիրված մենագրություններ:

1962 թ.-ից ինստիտուտում կազմվում եւ հրատարակվում են հեղինակային համաբարբառներ, որոնցում այբբենական կարգով ներկայացվում են տվյալ երկի բոլոր բառերը՝ համապատասխան գործածություններով: Համաբարբառներն անհրաժեշտ սկզբնաղբյուրներ են ոչ միայն հայ լեզվաբանության, այլեւ, առհասարակ, հայագիտության տարբեր բնագավառների՝ հայ գրականագիտության, հայ պատմագիտության, հայ ազգագրագիտության համար: Լույս է տեսել գրաբար ինքնուրույն գրականության հեղինակային համաբարբառների ավելի քան 20 հատոր, պատրաստ են մի շարք համաբարբառների էլեկտրոնային տարբերակները:

Գիտնականների հետաքրքրությունների ծիրում են նաեւ գրական լեզվի կանոնարկման, ինչպես եւ ուսուցողական լեզվաբանության հարցերը:

Աշխատանքներ են ընթանում հայերենագիտական ուսումնասիրությունների մեջ նոր եւ նորագույն տեխնոլոգիաների կիրառման ուղղությամբ, մասնավորապես՝ ԳԱԱ ինֆորմատիկայի եւ ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտի հետ համատեղ մշակվել է հայոց լեզվի համակարգչային հիմնօրինակը: Ստեղծվել է ժամանակակից հայերենի (արեւելահայ եւ արեւմտահայ տարբերակներ) բառապաշարի, այլեւ գրաբարի՝ ձեւաբանական բնութագրիչներով համակարգչային շտեմարան, որն օգտագործվում է գրաբար եւ աշխարհաբար բնագրեր խմբագրելու եւ սրբագրելու համար՝ Abbyy ֆիրմայի FineReader համակարգում: Մշակվել է ժամանակակից հայերենի բայերի շտեմարան՝ Access միջավայրում. բոլոր բայերի համար նշվում են խոնարհման հարացույցը, ձեւային բառակազմական կաղապարը, բառարանային բնութագրերը: Համակարգը հնարավորություն է ընձեռում ավտոմատ կերպով առանձ-

նացնելու ցանկացած ձեռնյոթ պարունակող, ցանկացած կաղապար կամ բնութագիր ունեցող բառերի ամբողջությունը:

2003թ.-ից ինստիտուտը հրատարակում է «Լեզու եւ լեզվաբանություն» պարբերականը, որի նպատակն է անդրադառնալ առհասարակ լեզվի ու լեզվաբանության առանցքային եւ զարգացման հեռանկարի տեսանկյունից առավել ուշագրավ խնդիրների ու հարցերի լուսաբանմանը: Լեզվի ինստիտուտը 2006 թ.-ից, ի հիշատակ մեծ լեզվաբան Գեորգ Ջահուկյանի, կազմակերպում է «Ջահուկյանական ընթերցումներ» ամենամյա գիտական նստաշրջանները՝ հանրապետության բուհերի, Արցախի ներկայացուցիչների, այլեւ արտերկրի հայագետների մասնակցությամբ: Ինստիտուտում 2010 թ.-ից գործում է երիտասարդ գիտաշխատողների խորհուրդ (նախագահ՝ բանասիրական գիտությունների թեկնածու Տիգրան Սիրունյան, նախագահի տեղակալ՝ բանասիրական գիտությունների թեկնածու Վալենտին Խաչատրյան): 2013 թ.-ից գիտական օջախն ավելի մեծ ուշադրություն է դարձնում արեւմտահայերենի ուսումնասիրության եւ կանոնարկման խնդիրներին: Նույն թվականից սկսած՝ ՀՀ սփյուռքի նախարարության հետ կազմակերպվում է ամենամյա համաժողովներ՝ նվիրված Մայրենիի օրվան: Ինստիտուտում կա մասնագիտացված գրադարան, որը ներառում է շուրջ 15 հազար միավոր գրականություն, այդ թվում՝ բազմաթիվ տարաբնույթ բառարաններ, գիտական պարբերականներ, ձեռագիր նյութեր. գրադարանային ֆոնդը 70 տոկոսով թվայնացվել է: Տարբեր ժամանակներում աճառյանցիները կազմակերպել են հայերենագիտական միջազգային գիտաժողովներ, մասնակցել բազմաթիվ միջազգային գիտաժողովների կազմակերպմանը, հաճախ զեկուցումներով հանդես եկել Հայաստանում եւ արտերկրում տեղի ունեցած գիտաժողովներում:

Տնօրենը նշում է, որ ինստիտուտի աշխատակիցները, գիտական խնդիրներից զատ, անդրադառնում են խոսքի մշակույթի բարձրացման, ուղղախոսության եւ ուղղագրության նորմավորման, հայոց լեզվի հարստացման, գրական հայերենի ամադարտության պահպանման հարցերին:

ԳԱԱ լեզվի ինստիտուտը հանրությանն ու ազգին հուզող խնդիրներից մեկունսի, սեփական պատյանում ամփոփված կառույց չէր եւ այսօր էլ չէ: Ինստիտուտի երկարամյա գիտաշխատող, կիրառական լեզվաբանության բաժնի վարիչ, բանասիրական գիտությունների դոցենտ, ԵՊՀ պրոֆեսոր Լիանա Հովսեփյանը հիշում է, որ այն տարիներին, երբ Մեծ եղեռնի տարելիցների նշումը, մեղմ ասած, չէր խրախուսվում, լեզվի ինստիտուտում էր, որ ամեն տարի հանդիսավոր միստեր ու ցերեկույթներ էին տեղի ունենում, իսկ երբ Ցեղասպանության փաստն ու ամենամյա ոգեկոչումներն ընդունվեցին պետականորեն, դարձյալ լեզվի ինստիտուտն էր, որ կազ-

մակերպված քայլարշավով ու իր աշխատակիցների ձեռքով պատրաստված ծաղկեփնջերով առաջիններից մեկն էր այցելում Ծիծեռնակաբերդի հուշահամալիր: Արցախյան շարժման տարիներին եւս գիտական օջախը առաջավորներից էր՝ ոչ միայն ցույցերին մասնակցելով, այլեւ ելույթներով, հողվածներով, նամակներով ու համախոսականներով: Ինստիտուտի աշխատակիցներից շատերը՝ թե՛ միջին սերնդի ներկայացուցիչներ, թե՛ ավելի երիտասարդներ, այն ժամանակ հայտարարված արտակարգ դրության եւ պարետային ժամի պայմաններում հնարավորություն էին ձեռք բերում շրջելու մարզերում եւ օգնություն հասցնելու Բաքվից ու Արցախից գաղթած եւ Հայաստանում ապաստանած մեր հայրենակիցներին: Ինստիտուտն առաջինն էր, որ կազմակերպեց բարեգործական աճուրդ, որի հասույթն ամբողջապես տրամադրվեց արցախյան ֆոնդին: Նույնպիսի օգնություն կազմակերպվեց նաեւ երկրաշարժից տուժած բնակչությանը: Գիտական կառույցը հատուկ բանկային հաշիվ բացեց կամավոր դրամական օգնությունների համար:

Լեզվի ինստիտուտը նաեւ հայ ազգային մշակույթի օջախ էր. այստեղ է Հայրիկ Մուրադյանի դատեր՝ ինստիտուտի աշխատակից երջանկահիշատակ Մարո Մուրադյանի ջանքերով ծնունդ առել ու ձեւավորվել «Աղունք» ազգագրական հանույթ, որի օրինակով ստեղծվեցին նաեւ այլ ազգագրական պարախմբեր ու երգչախմբեր: Հայ ավանդական երգը ժողովրդին մատուցելու գաղափարի շուրջ համախմբվեցին ինստիտուտի տարբեր բաժինների գիտաշխատողներ. համույթի ստեղծմանն աջակցել են ինստիտուտի ղեկավարները: Ինստիտուտի աշխատակիցները նախանձախնդիր էին նաեւ հայ պատմամշակութային հուշարձանների պահպանության հարցում:

Ներկայումս գիտական հաստատությունն ունի 7 բաժին՝ արդի հայերենի, բարբառագիտության, հայոց լեզվի պատմության, կիրառական լեզվաբանության, արեւմտահայերենի, ընդհանուր եւ համեմատական լեզվաբանության, բառարանագրության:

Արդի հայերենի բաժնում (վարիչ՝ բանասիրական գիտությունների թեկնածու Նվեր Սարգսյան) ուսումնասիրվում են արդի հայերենի բառապաշարի եւ քերականական իրողությունների, ժամանակակից խոսակցական հայերենի կառուցվածքի եւ գործառության հիմնահարցերը: Կատարվում է տարբեր բնագավառների տերմինաբանակարգերի ուսումնասիրություն: Ուշադրություն է դարձվում զանգվածային լրատվամիջոցների լեզվական առանձնահատկություններին՝ վեր հանելով դրանցում առկա ոչ կանոնական ձեւերն ու աղավաղումները: Շարունակվում են արդի հայերենի ուղղագրական բառարանի համալրման եւ այն հարատարակության նախապատրաստելու աշխատանքները:

Բարբառագիտության բաժնում (վարիչ՝ բանասիրական գի-

տությունների թեկնածու Վիկտոր Կատվալյան), ուր կազմվել եւ խմբագրվել է «Հայոց լեզվի բարբառային բառարանը», կազմվում են հայ բարբառների բառիմաստային եւ բառային զուգաբանությունների շտեմարաններ, որոնցում ներկայացվելու են հայերենի բարբառների հնչյունական եւ բառային այն ընդհանրությունները, որոնցով տարբեր բարբառախմբերի պատկանող բարբառներն ու խոսվածքները ի հայտ են բերում ընդհանուր լեզվական հատկանիշներ: Աշխատանքներ են կատարվում նաեւ բարբառագիտական նոր նյութեր գրանցելու, բարբառային բարեզգներ կազմելու ուղղությամբ: Քննվում են հայերենի բարբառների բառապաշարը՝ ըստ բառիմաստային խմբերի, հնչյունական ու քերականական առանձնահատկությունները:

Հայոց լեզվի պատմության բաժնում (վարիչ՝ բանասիրական գիտությունների թեկնածու Գայանե Մխիթարյան) ուսումնասիրություններն ընթանում են պատմական-նկարագրական ուղղություններով (քննվում են գրաբարի բառիմաստային խմբերը, կատարվում է գրաբարյան եւ միջինհայերենյան սկզբնաղբյուրների լեզվական քննություն):

Կիրառական լեզվաբանության բաժնում (վարիչ՝ բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Լիանա Հովսեփյան) ընթանում են ինքնուրույն եւ թարգմանական գրականության (IX-XI դարերի մատենագիրներ) համաբարբառների էլեկտրոնային տարբերակների կազմման աշխատանքները, ավարտվել է «Պատմութիւն Աղուանից աշխարհի», Ուխտանես Եպիսկոպոսի «Պատմութիւն Հայոց», Խոսրովիկ թարգմանչի «Պատմական մատենագրական ուսումնասիրութիւն», Արիստակես Լաստիվերտցու «Պատմութիւն...» համաբարբառների կազմումը: Շարունակվում է էլեկտրոնային քերականական բառարանի ստեղծման աշխատանքը, ուսումնասիրվում են հայերենի հնչաշրջայի հատկությունները եւ վերհատկության միավորները:

Արեւմտահայերենի բաժնում (վարիչ՝ բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ԳԱԱ թղթակից անդամ Արտեմ Սարգսյան) կատարվում են հետևյալ աշխատանքները. արեւմտահայերենի նորագույն շրջանի բառապաշարի քարտազման (շուրջ 20 հազար բառ-միավոր) աշխատանքների արդյունքների ամփոփում, գրական արեւմտահայերենի համակարգչային տերմինաբանության զուգաձեւությունների քննություն, պոլսահայ գրական լեզվի հանրալեզվաբանական քննության շարունակություն, նորագույն շրջանի մանուկ լեզվում օտարաբանությունների գործածության վերլուծություն: Բաժնին կից ստեղծվել է սփյուռքահայ մտավորականների ներկայացուցչական խումբ, որը մեծապես օժանդակում է բաժնի աշխատանքներին:

Ընդհանուր եւ համեմատական լեզվաբանության բաժնում (վարիչ՝ բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վազգեն Համբարձումյան) գիտահետազոտական աշխատանքներն ընթա-



նում են երկու հիմնական ուղղություններով՝ ընդհանուր եւ կիրառական լեզվաբանության, համեմատական եւ տիպաբանական լեզվաբանության: Ընդհանուր եւ կիրառական լեզվաբանության բնագավառում կատարվում են գրաբարի քերականական համակարգերի նկարագրություն՝ արդի կառուցվածքային մեթոդներով, Գեորգ Ջահուկյանի համընդհանուր լեզվաբանական կաղապարի առաջադրած մեթոդների կիրառմամբ իմաստի ձեւայնացման խնդիրների քննություն, հայկական հեռուստատեսային եւ էլեկտրոնային հրապարակախոսության մեջ քաղաքական խոսույթի քննություն, հայերենի եւ իտալերենի ճարտարապետական տերմինների զուգադրական քննություն: Համեմատական եւ տիպաբանական լեզվաբանության բնագավառում կատարվում են բառաքննական, ստուգաբանական ճշգրտումներ, լրացումներ՝ ստուգաբանական բառարանների մեջ, տարբեր հարաբերություններ արտահայտող բառերի (տեղ, ձեւ, ժամանակ իմաստային խմբի, զգայական ընկալումներ արտահայտող բառերի եւ այլն) ծագումնային, իմաստային եւ բառակազմական քննություն, հայերենի եւ բալթյան լեզուների զուգաբանությունների քննություն, բայասեռի քերականական կարգի (անցողականության/անանցողականության եւ պատճառականության) համեմատական-տիպաբանական քննություն:

Բառարանագրության բաժինը լեզվի ինստիտուտում վերաբացվել է 2013 թ.: Բաժնում (վարիչ՝ բանասիրական գիտությունների թեկնածու Անահիտ Գալստյան) ընթանում են «Արդի հայերենի նորաբանությունների բառարանի» կազմման աշխատանքները. բառարանը կիրառարկվի պրակներով:

Մեծ լեզվաբանի անունը կրող գիտական կառույցը շարունակում է եռանդուն գործունեությունը՝ հայտնաբերելով մեր հրաշք լեզվի՝ մեր նախնիներից մեզ ավանդված սրբություններից մեկի նորանոր գաղտնաբացումներ, անթաթ հսկելով նրա անաղարտությանը, ամուր ու աներեր կանգնած մնալով նրա պահպանության ու պաշտպանության դիրքերում:

Հրաչյա ԲԱՆՈՅԱՆ